ԻԶՄԻՐԻ «ԱՇԽԱՏԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ (1910-1915 ԹԹ.)

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ. Վ.

Իզմիրի «Աշխատանք» պարբերականը լույս է տեսել 1910-1915թթ.: Տպագրվել է չորեքշաբթի և շաբաթ օրերին քաղաքի Քեշիշյան տպարանում: Հիմնական աշխատակիցներն էին՝ Է. Ակնունին, Ավետիս Ահարոնյանը, Մկրտիչ Պարսամյանը, Մարգպետը, Օննիկը, Մելիք Հովսեփյանը, Խաչքարը, Հ. Համբարձումյանը, Վահե Տիճյանը, Ասպետը, Տարագիրը, Ամիրան և այլք: Տերը և տնօրենը Ս. Թոքաճյանն էր: Գործակալներ ուներ Կ.Պոլսում (Վահրամ Արծրունի), Տարսոնում (Խաչիկ Քարուկյան), Երզնկայում (Համբարձում Պ. Բալյան), Տենիզլիում (Ղազար Ս. Ղազարյան), Էտիրնեում (Գևորգ Աբրահամյան, Ստեփան Պարոնյան), Գրքագաճում (Դավիթ Էպլիղության)[1]:

«Աշխատանքը» դաշնակցական ուղղվածություն ունեցող մամուլի օրգան էր: Այստեղ տպագրվում էին ՀՅԴ Իզմիրի մարմնի հայտարարությունները, լուսաբանվում էր այդ կառույցի գործունեությունը, քննարկվում էին նրա ընդունած որոշումները և համագործակցությունը տեղի մյուս հայ կուսակցությունների հետ, ակնարկների միջոցով ներկայացվում էին հայտնի կամ ակտիվ դաշնակցական գործիչները, և հատուկ համարներ էին թողարկվում նրանց մահվան կապակցությամբ (օրինակ՝ Սիմոն Զավարյանի կամ Վահան Սրվանձտյանցի (Յոլակի), Սարգիս Կուկունյանի, Պետրոս Յազճյանի և այլոց անժամանակ մահվան կամ մահվան տարելից-ների առիթով) և այլն: Օսմանյան Թուրքիայում և մասնավորապես Իզմիրում տեղի ունեցող իրադարձությունները «Աշխատանքը» վերլուծում էր այդ կուսակցության տեսակետների համաձայն: Այդ վերլուծականները և ծրագրային հոդվածները զետեղվում էին թերթի 2-րդ էջում՝ որպես խմբագրական: Պարբերականի հիմնական բաժիններն էին՝ «Ազգային», «Բալկանյան նամականի», «Բալկանյան քրոնիկ», «Մամուլի տեսություն», «Կանանց հարց», «Նամակ խմբագրության», «Նվիրատվություն», «Հեռագիր», «Ստացանք», «Զվարճալիք», «Շնորհակալիք», «Ազդ», «Փոքր ծանուցումներ»: Ուներ «Թերթոն» բաժինը, որտեղ հատվածաբար տպագրում էին ժամանակի հայ և օտարազգի հայտնի գրողների ստեղծագործությունները: «Ս. Թոքաճյան գրատուն» բաժինը կայուն տեղ ուներ 4-րդ էջում: Այստեղ տեղեկացնում էին այդ գրատան ստացած նոր գրքերի մասին (հիմնականում՝ ՀՅԴ գործիչների)՝ ներկայացնելով նաև դրանց գները: Իզմիրի ներքին խնդիրներն ու հայ համայնքի կյանքի մանրամասներն ամփոփված էին «Ազգային» բաժնում: Բոլոր համարներում այս բաժնի ներքո հանգամանորեն անդրադառնում էին գավառի Ազգային վարչության քաղաքական ու գավառային ժողովներին և ուսումնական խորհրդի նիստերին: Չկա որևէ համար (նույնիսկ 1915 թ.),

---

[1] *Աշխատանք, Իզմիր, 1910, N 11(միկրոֆիլմ):*

որտեղ խմբագրությունը առնվազն 2 հոդված չնվիրեր կրթական հիմնահարցերին: «Աշխատանքի» համար ռազմավարական նշանակություն ունեին ազգային կրթության և աճող սերնդի հայեցի դաստիարակության խնդիրները, և անգամ 1915 թ. թերթը դրանք դարձյալ առաջնային էր համարում: Ընդ որում, ի տարբերություն ժամանակի արևմտահայ այլ պարբերականների, «Աշխատանքը» ոչ թե քննարկում էր ուսուցիչների ցածր աշխատավարձին կամ նյութական անձուկ կացությանն առնչվող խնդիրները, այլ՝ ազգային կյանքում ուսուցիչների դերի ու պատասխանատվության հարցերը: Այս առումով «Աշխատանքը» կարևորում էր ուսուցչական միությունների անհրաժեշտությունը, որոնք պիտի բժշկեին ուսուցիչների բարոյական ու մտավոր վերքերը[2]: «Գավառի ուսուցչության շուրջ» թղթակցության հեղինակ Վահե Տիճյանը տգիտությունը, անսկզբունքայնությունը և կոչմանը անարժան լինելն էր համարում գավառի ուսուցիչների արգահատելի պահվածքի պատճառները[3]: «Դպրոցէն կերպով մը իյնալու վախէն ահաբեկ, չգէտ Թաղական կամ Ուսումնական խորհուրդ-ներու և Հոգաբարձուներու բերանէն կախուող, քծնող ուսուցիչներու չափազանց շատ գոյութիւնը գաւառու մէջ ամենամեծ պատճառն է այս բարոյական ողբալի սնանկութեան»,- գրում էր Վ. Տիճյանը[4]: Ուսուցիչների մեջ կային նաև ազգատյաց ու լրտեսությամբ զբաղվող անձինք, որոնց դեմ ընդվզում էին ազատամիտ աշակերտները: Տարսոնի թղթակից Խաչիկ Քարուկյանը գրում էր, որ տեղի հայկական քոլեջի ուսուցիչ Գևորգ Տամլամյանը լրտեսի համբավ ուներ, իսկ պատմության ու թուրքերենի ուսուցիչ Սիմոն Քյուփելյանը դասաժամերին անարգում էր հայոց լեզուն և հայ գրականությունը[5]: «Ուսուցիչ»-ը շատ վայրերում հոմանիշ էր հա-մարվում «ստրուկ» կամ «հալածանքների և զրկանքների առարկա» իմաստներին[6]: «Աշխատանքը» բերում էր նաև փաստեր, երբ ուսուցիչները պատժվում էին իրենց համարձակ պահվածքի համար: Այդ առումով աչքի էր ընկնում Մեսրոպյան արական վարժարանը: Այնտեղի տեսչության ցուցումով Ուսումնական խորհուրդը աշխատանքից ազատել էր 2 ուսուցչի և նույնիսկ ավարտական դասարանի ակտիվ և ազատամիտ աշակերտներից մեկին՝ Հովհ. Ղազերյանին, տեղեկանք չէր տվել առ այն, որ նա սովորել և ավարտել էր վարժարանի Է դասարանը՝ դրանով նրան զրկելով գտած հարմար աշխատանքից[7]: Մեսրոպյան արական վարժարանում հետապնդում էին ուսուցչի կոչմանը հավատարիմ անձանց. «Դպրոցի մէջ լրտեսութիւնը պաշտօնական հանգամանք ունի, դաւեր ամէն կողմ»[8]: Այդ

---

[2] Նույն տեղում, 1913, N 2:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, 1911, 9/22 ապրիլ (միկրոֆիլմ):
[6] Նույն տեղում, 1913, N 2:
[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում, 1913, N 15:

քաղաքականությունը թելադրված էր վերևից՝ տեսուչ-տնօրեն Գ. Բարունակյանի կողմից: Նա իրեն շրջապատում էր այնպիսի մարդկանցով, որոնցից «ոչ մեկը կարելի է բառին բուն իմաստովը իսկական ուսուցիչ նկատել»[9]: Աշակերտները նրա դեմ գանգատ էին ներկայացրել Ուսումնական խորհրդին՝ բողոքելով ոչ միայն կռվազան բնավորությունից, այլև նշելով, որ դպրոցական «ռազմադաշտի վերջին բաղխումը պատճառ եղաւ, որ դպրոցի ամենէն փայլուն դասարանը փակուի»[10]: Թերթից տեղեկանում ենք, որ Գ. Բարունակյանը Իզմիրի հոգևոր առաջնորդ Մատթեոս Ինճյանի ծանոթն ու մտերիմն էր, և միայն այդ հանգամանքն էր նրան բերել վերոնշյալ պաշտոնին: «Աշխատանքը» ոչ միայն Մեսրոպյան, այլև Իզմիրի մյուս վարժարանների ու դպրոցների «ընկած» վիճակի համար մեղադրում էր Մատթեոս Ինճյանին, որն ամեն ինչ անում էր, որ կրթօջախներից անձնական շահույթ ունենար[11]: Պատահական չէ, որ թերթը 1913 թ. երեք խմբագրական է նվիրել այդ հիմնախնդրին՝ դրանք վերնագրելով «1912-1913 թթ. դպրոցական տարին. հաշվեհարդար»[12]: Դրանցում փաստարկված օրինակներով պատկերացում էր տրվում, թե ինչպես էին Մատթեոս Ինճյանը և Իզմիրի Մեսրոպյան ու Հռիփսիմյան վարժարաններում պաշտոնավարող նրա դրածո տնօրենները հաշվեհարդար տեսնում առաջադեմ ուսուցչական և աշակերտական կազմերի հետ: Թերթն առաջարկում էր ստեղծել խառը կամ երկսեռ վարժարաններ: Դրանք ձեռնտու էին երկու տեսանկյունից.

1. ֆինանսական, երբ հավաքված ազգային բյուջեից գումարը կբաշխվեր մեկ ուղղությամբ,
2. հոգևոր-դաստիարակչական, քանի որ երկսեռ կրթական համակարգը կնպաստեր արական և իգական սեռերի ներդաշնակ զարգացմանը և ապագայում ամուր ընտանիքներ կազմելուն[13]:

Ուսուցչական միությունը միայն կկարողանար պաշտպանել թեմական առաջնորդների, Թաղական և Ուսումնական խորհուրդների կողմից ուսուցիչների հաճախակի ոտնահարվող իրավունքները[14]: «Աշխատանքի» կարծիքով՝ Ուսուցչական միությունը ուսուցիչների մեջ կարթնացներ ու կամրապնդեր ստրկային կեցվածքի դեմ պայքարելու ոգին: Այն ուսուցիչներին կհամախմբեր մտահոգող խնդիրները միասնական ուժերով լուծելու նպատակով[15]: «Աշխատանքի» Կ.Պոլսի թղթակից Վահրամ Արծրունին առաջարկում էր միավորել գավառի ուսուցիչների ուժերը Ուսուցչական միության մեջ: Եվ նրանց խորհուրդ էր տալիս իրենց կազմակերպության կանոնադրությունը մշակելիս հաշվի առնել և օգտվել Փարիզի ուսուցիչների

---

[9] Նույն տեղում, 1913, N 3:
[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում:
[12] Նույն տեղում, 1913, N 3, 4, 5:
[13] Նույն տեղում, 1914, N 60:
[14] Նույն տեղում, 1913, N 3:
[15] Նույն տեղում:

փոխադարձ օգնության ընկերության և Սենի ուսուցչական միության ծրագրերից[16]:

Կրթական հիմնախնդիրները կարելի էր լուծել՝ մշակելով համալիր և համապարփակ ծրագիր: «Աշխատանքը» համոզված էր, որ այդ ծրագրում միայն Ուսուցչական միություն ստեղծելու առաջարկը բավարար չէր: Այդ միությունից բացի՝ պարբերականը առաջարկում էր.

- հիմնել մանկավարժական ուղղվածություն ունեցող թերթ[17],
- կազմել ուսումնական նոր ծրագրեր (մասնավորապես «Հայ ժողովրդի պատմություն» առարկայի համար),
- թարմացնել կամ գրել նոր դասագրքեր[18] («Աշխատանքը» նշում էր, որ գավառի վարժարաններում օգտագործվում էին 10-12 տարի առաջ հրատարակված «աշխարհագրություն» և «հնագիտություն» առարկաների դասագրքեր[19]),
- կիրառել ժամանակակից կրթական սկզբունքներ դասավանդման մեթոդներում և ուսումնական գործընթացում[20]:

«Աշխատանքը» կրթական հիմնախնդիրների լուծումը կապում էր նաև գավառի ուսուցիչների աշխատանքային կարճաժամկետ պայմանագրերի (ամենաշատը երկու տարի տևողություն ունեին) և ցածր վարձատրվող աշխատանքի հետ: Այս երկու հանգամանքը մեծապես խոչընդոտում էին ուսուցիչների առաջխաղացմանը և մասնագիտական առաջընթացին: Նրանք իրականում պաշտպանված չէին ո՛չ նյութապես, ո՛չ բարոյապես[21]: Կրթական հիմնախնդիրները բարձրաձայնելու տեսակետից ուշագրավ էր Մելքոն Հովսեփյանի՝ «Մի ձեռքը ծափ չի տար. մանկավարժական հարցեր» երկմաս հոդվածը[22]: Նրա կարծիքով՝ դպրոցը և ընտանիքը պետք է ձեռք ձեռքի տային և միասին զբաղվեին երեխաների կրթության ու դաստիարակության գործով: Դպրոցն, առանձին վերցրած, ոչինչ չէր կարող անել: «Մեկ ձեռքը ծափ չի տար», և անհրաժեշտ էր ընտանիքի աջակցությունը[23]: «Հաշվեկշիռ մը» հոդվածի հեղինակ Բ. Միլտոնյանը համեմատում էր վերջին չորս տարվա կրթական կյանքում տեղի ունեցած անցուդարձերն ու փոփոխությունները: «Կրնա՞նք ըսել, թէ ներկայիս դպրոցները աւելի բարձր մակարդակ մը ունին քան անցեալինը, կրնա՞նք ըսել, թէ նախորդ 1500 ոսկի պիւտճէին վրայ եղած մօտաւորապէս 1000 ոսկիի այժմու յաւելումը բերած է իր հետ 1000 փարայի արդիւնք: Բացարձակապէս ո՛չ»,- գրում էր Բ.Միլտոնյանը[24]: Նա սխալ էր համարում գիշերօթիկ հաստատությունները փակելը և սաներին առանց

---

[16] Նույն տեղում, 1911, 7/20 ապրիլ (միկրոֆիլմ):
[17] Նույն տեղում,1913, N 2:
[18] Նույն տեղում, 1913, N 5:
[19] Նույն տեղում:
[20] Նույն տեղում, 1913, N 3:
[21] Նույն տեղում:
[22] Նույն տեղում, 1913, N 25, 26:
[23] Նույն տեղում, 1913, N 25:
[24] Նույն տեղում, 1913, N 15:

ուսման թողնելը[25]: Խմբագրականներից մեկը կարգախոսային էր՝ «Զորավոր Ուսումնական խորհրդի մը պետքը»[26]: 1914 թ. Իզմիրի Ուսումնական խորհուրդը կազմալուծվել էր, իսկ Քաղաքական ժողովը գրեթե մեկ ամիս չէր կազմակերպում դրա անդամների ընտրությունը: Կրթական հարցերի լուծման համալիր ծրագրում «Աշխատանքը» ներառում էր գավառի՝ հաջողության հասած ազգային վարժարանների ու կրթօջախների փորձը յուրացնելու գործը: Իբրև օրինակ մատնանշում էր Վանի Սանդուխտյան օրիորդաց դպրոցի 40-ամյա փորձառությունը[27]:

Պարբերականը մշտապես անդրադարձել է Իզմիրի կրթօջախների հիմնահարցերին: 1915 թ. բոլոր համարներում վերլուծական հոդվածներ կան այս թեմայով: Դրանցից տեղեկանում ենք, որ արդեն 1915 թ. մարտի վերջին Իզմիրի Ուսումնական խորհրդի անդամները հրաժարականներ են ներկայացրել Քաղաքական ժողովին, որն էլ Տնտեսական խորհրդին հանձնարարել է զբաղվել այդ խնդրով: «Աշխատանքը», իրադրությունը վերլուծելով, իրավացիորեն գրում է, որ այդ հարցը չէր լուծվելու, որովհետև, նախ՝ դա Տնտեսական խորհրդի իրավասությունների մեջ չէր մտնում, ապա՝ այդ խորհրդի գործունեության ժամկետը վաղուց սպառվել էր[28]: Նման իրավիճակում, երբ հայ ժողովրդին սպառնում էր ցեղասպանության վտանգը, իսկ հայկական կրթօջախները բարձիթողի էին, բնական էր, որ Ուսումնական խորհրդի պարտականությունները պիտի փորձեր ստանձնել կամ կատարել ազգային մեկ այլ կառույց՝ Իզմիրի Տիկնանց խնամակալությունը: Թերթը, անդրադառնալով այդ կազմակերպության ծավալած գործունեությանը, գրում էր, որ դա դեմ էր Ազգային սահմանադրությանը: Թեև ողջունելի էր այն հանգամանքը, որ Տիկնանց խնամակալությունը գումարներ էր հանգանակում հայկական վարժարանների համար, բայց հիմնականում զբաղվում էր կրթական երկրորդական նշանակություն ունեցող խնդիրներով: Ուստի առաջնային էր համարում վերընտրված և գործող Ուսումնական խորհուրդ ունենալու հարցը. «Ուսումնական խորհուրդը պետք է»[29]:

«Աշխատանքը» չի ունեցել ընդգծված քաղաքական ուղղվածություն: Այն Իզմիրի գավառի հայությանը մտահոգող հասարակական-քաղաքական հիմնահարցերին անդրադարձել է հարևանցիորեն ու հիմնականում այլ թեմաների (առավելապես՝ կրթական) քննարկման շրջանակներում: Խմբագրականներ չուներ քաղաքական խնդիրների վերաբերյալ: Վերլուծական հոդվածներ է արտատպել «Դրոշակից», որոնք մեծ մասամբ նվիրված էին Հայկական և Արևելյան հարցերին: 1913թ. «Աշխատանքի» Լոնդոնի սեփական թղթակից Մ. Փափազյանը փաստում էր հետևյալը. «Այժմ քիչեր մնացած են այնքան ծայրայեղորեն լաւատես, որ հաւատան, թէ

[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում, 1914, N 55:
[27] Նույն տեղում, N 52:
[28] Նույն տեղում, 1915, N 101:
[29] Նույն տեղում, 1915, N 99:

Թուրքիա պիտի կրնայ... վերափոխուիլ կենսունակ երկրի մը»[30]: Պարբերականի որդեգրած այս տեսակետը հիմնավոր է դառնում 1913-1914թթ.: Այս շրջանում «Աշխատանքի» էջերում «Արևմտահայ գավառից» ստացված թղթակցությունների միջոցով ներկայացվում էին, մի կողմից, տեղեկություններ հայ ժողովրդի նկատմամբ կի- րառվող անօրինական ձեռնարկների, բռնարարքների մասին, մյուս կողմից՝ ՀՅԴ համագումարների, ժողովների որոշումները և հայության ուժերը միավորել փորձող գործողություններն ու քայլերը:

Գավառից ստացված թղթակցությունների մեջ առանձնանում էր Նահանգային ժողովի ընտրություններին հայերի մասնակցել-չմասնակցելու խնդիրը: Օրինակ՝ Վանի թղթակից Օննիկը գրում էր, թե Վանում, Գավառում, Կարճկանում, Մոկսում և Բերձորում բնակվող հայերը չէին մասնակցում Նահանգային ժողովի ընտրություններին, քանի որ Թուրքիայի նահանգային նոր օրենքը չէր պաշտպանում ազգային փոքրամասնությունների քաղաքական իրավունքները: Թուրքիայում անարդար սկզբունքով էին բաժանում կամ որոշում ընտրական շրջանները, և ըստ այդմ՝ հայ ազգաբնակչությունը Նահանգային ժողովում չէր կարողանում ունենալ իր թվին համապատասխան ներկայացուցիչներ[31]:

Քաղաքական խնդիրների շարքում «Աշխատանքի» հրապարակումների մեջ առանձնանում էին Ռոդոսթոյի աղետը և դրան առնչվող քննարկումները: Ռոդոսթոյում կատարված իրադարձությունները կարծես «Ադանայի դէպքին մանրանկարը» լինեին[32]: Ռոդոսթոյից ուղարկված թղթակցությունները պատմում էին քաղաքի հայ ազգաբնակչության ջարդի մանրամասները: Դրանցից մեկում, օրինակ՝ նշվում էր, որ «օսմանեան զինուորները կը յարձակին շուկան գտնուող հայերուն վրայ և կը սպաննեն ութը հայեր, իսկ քաղաքէն դուրս դաշտին մէջ չարաչար սպանուողներու թիւը 100-էն աւելի է, որոնք այլանդակուած վիճակի մէջ անթաղ կը մնան»[33]: «Աշխատանքը» օբյեկտիվ պատկերացում տալու նպատակով Ռոդոսթո էր գործուղել Հ. Համբարձումյանին[34]: Նա իր թղթակցությունների միջոցով հստակ նկարագրում է Ռոդոսթոյի ջարդերը: Հ. Համբարձումյանի կարծիքով՝ հնարավոր էր, որ Ռոդոսթոյի անհետ կորած հայերից շատերին թուրքերն էին սպանել ու գաղտնի թաղել[35]: Ռոդոսթոյում և Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող կոտորածները, «Աշխատանքի» համոզմամբ, պետական հատուկ մշակված քաղաքականության բաղադրամասն էին: Թուրքական հայաջինջ քաղաքականության մեջ էր մտնում նաև արտագաղթը: Այս թեմային հիմնականում անդրադառնում էր Մարզպետը:

---

[30] Նույն տեղում, 1913, N 2:
[31] Նույն տեղում, N 5:
[32] Նույն տեղում, N 6:
[33] Նույն տեղում:
[34] Նույն տեղում, 1913, N 8:
[35] Նույն տեղում:

Հոդվածներից մեկում նա հանգամանորեն վերլուծում էր արևմտահայերի արտագաղթի պատճառները[36]: Դրանք երկուսն էին՝ քաղաքական և տնտեսական: Մարզպետը թվարկում էր արևմտահայության տնտեսական «ավերմունքի» պատճառները՝ պետական ծանր տուրքերը, քուրդ բեկերի կողմից ճնշիչ միջոցներով հայերից գանձվող ապօրինի տուրքերը, «սալաֆ» կոչվող տուրքը:

Թուրքիայի երկրագործական բանկը չէր վերադարձնում հայ գյուղացիների գրավադրած հողերը՝ սպառնալով սպանել նրանց, նույնիսկ այն դեպքում, երբ վերջիններս գումարը հետ էին տալիս. «Հողերէդ ետ կեցիր կամ կը սպաննուիս»[37]: Մարզպետը տեղեկացնում էր, որ այդ սպառնալիքները երկրագործական բանկի թուրք տերերը իրականացնում էին, եթե հայերը տեղի չէին տալիս: Բացի այդ՝ բանկը հայ գյուղացիների գրավադրած հողերը վաճառում էր հարուստ թուրքերին[38]: Մարզպետը կարծում էր, որ արտագաղթի տնտեսական պատճառները վերացնելուն զուգահեռ՝ անհրաժեշտ էր աշխատել դրա քաղաքական պատճառներն ուսումնասիրելու և վերացնելու ուղղությամբ[39]: Արտագաղթի կործանարար հետևանքների դեմ պայքարելու նպատակով էր, որ 1913 թ. ամռան վերջերին Իզմիրի հայ երեք քաղաքական կուսակցությունները («Դաշնակցութեան Իզմիրի կոմիտեն, Հնչակեան Իզմիրի մասնաճիւղը, Սահմանադիր-ռամկավար ակումբը»[40]) խորհրդակցական մի շարք ժողովներից հետո ստեղծում են միջկուսակցական համերաշխության մարմին՝ «Հայկական դատի շուրջ միասնաբար պայքարելու համար»[41]: «Աշխատանքը» տպագրել է իզմիրահայության համերաշխության մարմնի ծրագիրը[42], որտեղ մանրամասն շարադրված էին դրա նպատակները: Այդ մարմինը ձգտելու էր հաշտարար եղանակով լուծել տարածաշրջանի հայ ազգաբնակչության մեջ գոյություն ունեցող կամ ապագայում ծագող ազգային վեճերը, նպաստել համազգային տնական համերաշխության մթնոլորտի պահպանմանը և այդ կերպ օգտակար լինել ազգային կենսական շահերին[43]: Թերթը պարբերաբար լուսաբանում էր հիշյալ միջկուսակցական համերաշխության մարմնի աշխատանքները: Այդ հրապարակումներից պարզ է դառնում, որ անպտուղ էին մնում ազգային ուժերը համախմբելու ջանքերը, և այդ կառույցը դատապարտված էր անգործության[44]: «Աշխատանքը» կրկին ու կրկին հոդվածներ էր տպագրում արտագաղթի և Թուրքիայի ներքաղաքական լարված հարաբերությունների

---

[36] Նույն տեղում, 1913, N 10:
[37] Նույն տեղում:
[38] Նույն տեղում:
[39] Նույն տեղում:
[40] Նույն տեղում, 1913, N 19:
[41] Նույն տեղում:
[42] Նույն տեղում, 1913, N 28:
[43] Նույն տեղում:
[44] Նույն տեղում, 1913, N 23:

վերաբերյալ: Հատկանշական է, որ անդրադառնալով Բալկանյան թնջուկին, թուրք-բուլղարական կամ հույն-թուրքական ռազմական գործողություններին և բանակցային գործընթացին՝ պարբերականը խուսափել է բացահայտ ներկայացնել հայ ժողովրդի ակնկալիքները, իսկ եթե խոսել է դրանց մասին, ապա՝ շատ ընդհանուր ձևով, պահպանել է չեզոք կեցվածք և չի պաշտպանել կողմերից որևէ մեկին[45]: Խմբագրակազմը գիտակցում էր, որ թեև Հայկական հարցի լուծման համար նպաստավոր (միևնույն ժամանակ՝ վտանգավոր) պայմաններ էին ստեղծվել, բայց Թուրքիայի կառավարող՝ «Իթթիհատ վե թերաքգ» կուսակցությունը չէր հանդուրժում այլախոհությունը և ազգերի ինքնավարությունը[46]:

«Աշխատանքի» հրապարակումներում ազգային համախմբման անհրաժեշտությունը հատկապես շեշտվում է 1913 թ. կեսերից սկսած: Այս շրջանում ամենքին մտահոգում էին օսմանյան հերթական խորհրդարանական ընտրությունները և այնտեղ հայ պատգամավորների թվի հետ կապված հարցերը: «Աշխատանքի» հոդվածագիրներից մեկը՝ Ամիրան, ընտրությունները ձևական էր համարում, որովհետև Թուրքիայում չկային ոչ ընդդիմադիր կուսակցություններ, ոչ ընտրապայքար[47]: Հոդվածագրի համոզմամբ՝ այդ պայմաններում Իթթիհատը կազմելու էր մեծամասնություն, և անհնար էր մտածել անգամ, որ կապահովվեր ազգերի համեմատական ներկայացուցչություն: Հայ քաղաքական կուսակցությունները որոշել էին, թե ինչ դիրք էին բռնելու. «Իրենց պահանջքը պիտի ըլլան հաստատուն երաշխիքներ՝ Հայերու համեմատական ներկայացուցչութիւնը ապահովելու համար նոր Երեսփոխանական Ժողովին մէջ. այլապէս պօյքո՞թ ընտրութիւններու դէմ»[48]: «Երեսփոխանական ընտրությունները և հայերը» հարցազրույցում[49] Է. Ակնունին պնդում էր, որ Իթթիհատի կողմից նշանակված հայ երեսփոխանները կլինեին այդ կուսակցության և ոչ թե հայ ժողովրդի ներկայացուցիչները խորհրդարանում: Քանի որ Թուրքիայում 1913 թ. մեկ երեսփոխանը 50.000 անձի ներկայացուցիչն էր, իսկ «Աշխատանքի» տվյալներով՝ այդ օրերին այդ երկրում 2.000.000 հայ էր ապրում, հայերը պահանջում էին 20 երեսփոխան ունենալ օսմանյան խորհրդարանում[50]:

Արևմտահայությունը փորձում էր քաղաքական պայքարը կազմակերպել քաղաքակիրթ եղանակներով՝ Թուրքիայի խորհրդարանում պատգամավորներ ունենալու, թուրքական կուսակցությունների հետ համագործակցելու և տարածաշրջանում հետաքրքրություններ դրսևորող պետությունների հետ բանակցելու միջոցով: Անգամ պայքարի այս

---

[45] Նույն տեղում, 1913, N 21:
[46] Նույն տեղում, 1913, N 25:
[47] Նույն տեղում, 1913, N 32:
[48] Նույն տեղում:
[49] «Աշխատանքը» այն արտատպել է Կ. Պոլսի՝ ֆրանսերենով հրատարակվող «Ստամբուլ» օրաթերթից (տե՛ս «Աշխատանք», 1913, N 46):
[50] Նույն տեղում:

ճանապարհը արևմտահայության դեմ ավելի էր գրգռում թուրքական իշխանություններին, որոնք 1913-1914 թթ. արդեն բացահայտ սպառնում էին հայերին, ընդ որում՝ ոչ միայն խոսքով, այլև ջարդերով: «Աշխատանքում» այդ կարգի սպառնալիքների բազմաթիվ օրինակներ կային: Օրինակ՝ թերթի Վանի թղթակից Ա. Հրահատը տեղեկացնում էր, որ Հայոց ձորի Անգղ գյուղի մոտ 2 հայի և 2 քրդի միջև ծագած զինված միջադեպից հետո թուրք ոստիկանները ազատ էին արձակել քրդերին և ձերբակալել էին ոչ միայն այդ հայերին, այլև Անգղ գյուղի ևս 17 հայ բնակչի: Երբ անգղցիները բողոքով դիմել էին Հայոց ձորի թուրք մյուտիրին, նա պատասխանել էր սպառնալիքով. «Հայե՛ր, ձեր բոլոր ջանքն է որ Ռուսիան միջամտէ, բայց գիտցէք, որ այդ պարագային ձեզմէ ոչ մէկը ողջ չպիտի թողունք»[51]:

1915 թ. «Աշխատանքը» կոչ էր անում Իզմիրի գավառի բնակիչներին օգնել Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած իրենց հայրենակիցներին: Օրինակ՝ նման հոդվածներից մեկում նշվում էր, որ իզմիրցիները գոնե «Աղքատխնամ» կազմակերպություն ունեին, որը, սակայն, չէր մտածում օգնության ձեռք մեկնել գավառի հեռավոր անկյուններում լքված անտեր-անտիրական հայերին[52]: «Զո՞վ մեղադրենք» հարցով էր թերթը դիմում ընթերցողներին՝ ներկայացնելով այն անտարբերությունը, որը նրանց խստասիրտ էր դարձրել, քանի որ նրանք մի կտոր հաց չէին տալիս սոված որբերին կամ այրիներին[53]:

1915 թ. վերջին համարներում «Աշխատանքը» բարձրացնում էր ազգային դիմագիծը չկորցնելու և հայրենիքում հայ մնալու խնդիրները:

ИЗМИРСКАЯ ГАЗЕТА
“АШХАТАНК” (1910-1915 ГГ.)

ОВСЕПЯН М. В.

Резюме

Еженедельная газета “Ашхатанк” издавалась в городе Измире в 1910-1915 гг. “Газета” имела продашнакскую направленность, но не являлась органом АРФ-Дашнакцутюн. “Ашхатанк” придавала огромное значение вопросам национального образования и во всех номерах обращалась к проблемам образования как важнейшего средства сохранения национальной идентичности.

---

[51] *Նույն տեղում, 1913, N 15:*

[52] *Նույն տեղում, 1915. N 96 (միկրոֆիլմ):*

[53] *Նույն տեղում:*

Газета не имела четкой политической направленности. Общественно-политические проблемы на е¸ страницах обсуждались в рамках иных редакционных статей.

IZMIR-BASED NEWSPAPER
“ASHKHATANK” (1910-1915)

M. HOVSEPYAN

Abstract

The “Ashkhatank” weekly was published in the city of Izmir from 1910 to 1915. Though it was a pro-Dashnak (Armenian Revolutionary Federation, ARF) paper, it did not represent any ARF body. National education was of strategic importance for the paper. Even back in 1915, “Ashkhatank” published articles, raising the issue of national education. All issues of “Ashkhatank” addressed the issue of education in Western Armenian schools. The weekly considered education an important tool for preserving Armenian national identity. The newspaper highlighted the importance of education for women in Armenian. “Ashkhatank” did not have a definite political affiliation. It studied socio-political problems in the context of debate over other regular topics.